ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրենի պաշտոնում ընտրվեց Լիլիթ Սահակյանը

Ապրիլի 22-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրենի պաշտոնում ընտրվեց աշխարհագրական գիտությունների թեկնածու Լիլիթ Սահակյանը:

Լիլիթ Սահակյանի գիտական գործունեության հիմնական ուղղությունը շրջակա միջավայրի երկրաքիմիան է, որի շրջանակներում նա հեղինակել է 120 գիտական աշխատություն, որոնցից 5 կոլեկտիվ մենագրություն, 3 գիտամեթոդական ձեռնարկ և 70 գիտական հոդված:

Լիլիթ Սահակյանը ծնվել է 1979 թ.-ին Երևանում: 2000 թ.-ին ավարտել է ԵՊՀ աշխարհագրության ֆակուլտետի բակալավրիատը, 2002 թ.-ին՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ գեոէկոլոգ մասնագիտացմամբ: 2008 թ.-ին ստացել է աշխարհագրական գիտությունների թեկնածուի աստիճան:

1999 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնում՝ սկզբում որպես լաբորանտ, այնուհետ կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող Շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժնում, ապա նույն բաժնի ղեկավար 2010-2017 թթ.-ին: 2014թ-ից ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի գիտական գծով փոխտնօրենն էր:

2010 թ.-ից դասավանդում է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայում և ասպիրանտուրայում «Շրջակա միջավայրի երկրաքիմիա» և «Հետազոտության տրամաբանություն» առարկաները:

Լիլիթ Սահակյանը ՀՀ նախագահի բնական գիտությունների բնագավառում լավագույն երիտասարդ գիտնականի մրցանակակիր է:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն